Հավելված N 6
ՀՀ կառավարության 2025 թվականի
փետրվարի 6-ի N 125 - Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ «ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԱՆՎԱՆԱՑԱՆԿ» (ԱՏԳ ԱԱ) ԴԱՍԱԿԱՐԳՉԻ 1504, 1505 00, 1506 00 000 0, 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԾԱԾԿԱԳՐԵՐԻՆ ԴԱՍՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ՀԻՄՆԱԿԱՆ ՄՈԴԵԼԻ ՀԱՄԱՁԱՅՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՄԱՆ

1. Սույն կանոններով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 390-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 1504, 1505 00, 1506 00 000 0, 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ծածկագրերին դասվող ապրանքների (ճարպեր, յուղեր, ձեթ, այլ յուղեր, մարգարին)՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի կողմից 2021 թվականի մարտի 5-ին հաստատված Եվրասիական տնտեսական միությունում նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորման համակարգի հիմնական տեխնոլոգիական կազմակերպչական մոդելի համաձայն դրոշմավորման հետ կապված հարաբերությունները:

2. Ճարպերի, յուղերի, ձեթի, այլ յուղերի, մարգարինի դրոշմավորման համար օգտագործվում է նույնականացման միջոց՝ նիշերի եզակի հաջորդականություն, որը ներկայացված է մեքենայական ընթերցման համար Data Matrix GS1 ձևաչափով երկչափ շտրիխ կոդի տեսքով և ձևավորված է ISO/IEC 16022:2006 միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան «Տեղեկատվական տեխնոլոգիաներ: Ավտոմատ նույնականացման և տվյալների հավաքագրման տեխնոլոգիաներ: Data Matrix ձևաչափով շտրիխ ծածկագրի սիմվոլիկայի տեխնիկական հատկորոշիչ» կամ դրան նույնական Եվրասիական տնտեսական միության անդամ պետության ազգային ստանդարտի սիմվոլիկայի հստակեցում: Դրոշմավորման ծածկագիրը նույնականացման միջոցի վերափոխելիս պետք է կիրառվի ECC 200-ի սիմվոլիկան՝ օգտագործելով FNC1 նշանը՝ որպես տվյալների համապատասխանության նշան GS1-ի կիրառման նույնացուցիչների (AI) տիպային ձևաչափին:

3. Ճարպերի, յուղերի, ձեթի, այլ յուղերի, մարգարինի սպառողական, խմբային և հավաքածուի փաթեթավորման նույնականացման միջոցը ներառում է դրոշմավորման

ծածկագիր՝ բաղկացած տվյալների 4 խմբից, որոնցից առաջինն ու երկրորդը ձևավորում են ապրանքի սպառողական, խմբային և հավաքածուի փաթեթավորման նույնականացման ծածկագիրը, երրորդ խումբը՝ ստուգման բանալին, իսկ չորրորդ խումբը՝ ստուգման ծածկագիրը: Ընդ որում՝

1) առաջին խումբը բաղկացած է 14 թվանշանից (առևտրային միավորի գլոբալ նույնականացման համարը (GTIN)) և ներառում է ապրանքի ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (01), որը գեներացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված ազգային օպերատորի (այսուհետ՝ օպերատոր) կողմից՝ հիմնվելով տնտեսվարողի՝ վերը նշված ապրանքի վերաբերյալ տրամադրած տեղեկատվության վրա,

2) երկրորդ խումբը բաղկացած է 13 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)) և ներառում է ապրանքի անհատական սերիական համարը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (21), որը գեներացվում է օպերատորի կամ տնտեսվարողի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում),

3) երրորդ խումբը բաղկացած է 4 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)) և ներառում է ստուգման բանալին, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (91) և որը գեներացվում է օպերատորի կողմից (տվյալների այս խմբի եզրափակիչ նիշը հանդիսանում է նիշ-բաժանարարը, որն ունի «29» ծածկագիրը ASCII նիշերի աղյուսակում),

4) չորրորդ խումբը բաղկացած է 44 նիշից (թվեր, լատինատառ այբուբենի մեծատառեր ու փոքրատառեր, ինչպես նաև հատուկ նիշեր (!"%&'()*+,-./_:;=<>?)) և ներառում է ստուգման ծածկագիրը, որին նախորդում է կիրառման նույնացուցիչը (92), և որը գեներացվում է օպերատորի կողմից:

4. Կախված յուրաքանչյուր դյույմի վրա տպագրության կետերի քանակից՝ նույնականացման միջոցի չափը կարող է լինել համաձայն հետևյալ սանդղակի՝

1) 200 կետ յուրաքանչյուր դյույմի վրա – 18.3x18.3 միլիմետր կամ 22.9x22.9 միլիմետր,

2) 300 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 15.2x15.2 միլիմետր, 18.3x18.3 միլիմետր, 21.3x21.3 միլիմետր կամ 24.4x24.4 միլիմետր,

3) 450 կետ յուրաքանչյուր դյույմի վրա - 14.2x14.2 միլիմետր, 16.3x16.3 միլիմետր, 18.3x18.3 միլիմետր, 20.3x20.3 միլիմետր, 22.4x22.4 միլիմետր, 24.4x24.4 միլիմետր կամ 26.4x26.4 միլիմետր,

4) 600 կետ յուրաքանչյուր դույմի վրա – 12.2x12.2 միլիմետր, 13.7x13.7 միլիմետր, 15.2x15.2 միլիմետր, 16.8x16.8 միլիմետր, 18.3x18.3 միլիմետր, 19.8x19.8 միլիմետր, 21.3x21.3 միլիմետր, 22.9x22.9միլիմետր, 24.4x24.4 միլիմետր կամ 25.9x25.9 միլիմետր:

5. Նույնականացման միջոցի վրա չպետք է լինի մեկ այլ տեղեկատվություն, որը կխոչընդոտի նույնականացման միջոցի ընթերցմանը: Նույնականացման միջոցը պետք է տեղադրվի այնպես, որ չխախտվի ապրանքի փաթեթավորման վրա տպված տեղեկատվության ամբողջականությունը՝ տեխնիկական կանոնակարգման ոլորտի նորմատիվային փաստաթղթերի պահանջների համաձայն:

6. Նույնականացման միջոցը կիրառվում է սպառողական, խմբային կամ հավաքածուի փաթեթավորման, պիտակի կամ կպչուն պիտակի վրա այնպիսի մեթոդով, որը թույլ չի տալիս նույնականացման միջոցն առանձնացնել փաթեթից: Նույնականացման միջոցը չի կարող կիրառվել սպառողական փաթեթավորման այնպիսի մասերի վրա, որոնք առանց ապրանքը կամ ապրանքի սպառողական տեսքը վնասելու կարող են տարանջատվել: Նույնականացման միջոցը կիրառվում է փաթեթավորման առավել տեսանելի հատվածի վրա:

7. Կիրառման պահանջներն են՝

1) ապրանքի սպառողական խմբային կամ հավաքածուի փաթեթավորման վրա կիրառելու համար պետք է օգտագործվի տեխնոլոգիա, որն ապահովում է փաթեթավորման վրա կիրառված նույնականացման միջոցների ընթերցումը կիրառելու պահից մինչև ապրանքի սպառողին վաճառելու պահը,

2) չի թույլատրվում ապրանքի փաթեթավորման վրա տպել որևէ տարր, որը կծածկի կամ կդժվարացնի նույնականացման միջոցի ընթերցումը:

8. Ապրանքի փաթեթավորման վրա նույնականացման միջոցները կիրառելու համար օգտագործվում են դրոշմավորման հետևյալ մեթոդները՝

1) տպագրական մեթոդ,

2) դրոշմավորման ուղիղ մեթոդ (ներառում է կիրառման տարբեր հնարավորություններ՝ լազերային, թանաքային կիրառում, ջերմային փոխանցում: Ծածկագիրը պետք է կիրառվի դրա համար պատրաստված մակերեսի վրա և ապահովի հակադրության ցանկալի մակարդակը, ծածկագրի շուրջ անհրաժեշտ ազատ գոտին),

3) պիտակավորում:

9. Ապրանքների շրջանառության մասնակիցը դրոշմավորման ծածկագիր ստանալու նպատակով մինչև դրոշմավորման ծածկագիր ստանալու հայտի ներկայացումը էլեկտրոնային եղանակով տեղեկատվություն է ներկայացնում օպերատորին՝ համաձայն ձևի:

Ձև

Ապրանքների շրջանառության մասնակցի տվյալները

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Նկարագրությունը
1.	Կարճ անվանում	Այո	Կազմակերպության կարճ անվանում
2.	Ամբողջական անվանում	Այո	Կազմակերպության ամբողջական անվանում
3.	Կազմակերպչական իրավական ձև	Այո	
4.	Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	Այո	
5.	Իրավաբանական հասցե	Ոչ	
6.	Գործունեության հասցե	Այո	
7.	Կոնտակտային անձ	Այո	
8.	Հանրային ծառայությունների համարանիշ (ՀԾՀ)	Այո	
9.	Էլ. հասցե	Այո	
10.	Հեռախոսահամար	Այո	
12.	Ապրանքախումբ	Այո	
13.	Մասնակցի տեսակ	Այո	
14.	Լիցենզիայի վերաբերյալ տեղեկություններ	Ոչ	

Ապրանքի նկարագրություն

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Նկարագրությունը
1.	Ապրանքախումբ	Այո	

2.	Ապրանքի կատեգորիա	Այո	
3.	ԱՏԳ ԱԱ ծածկագիր	Այո	ԱՏԳ ԱԱ - Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը (ԵԱՏՄ)
4.	GTIN	Այո	GTIN (Global Trade Item Number) - Համաշխարհային առևտրի ապրանքի համարը՝ մշակված GS1 միջազգային կազմակերպության կողմից
5.	Փաթեթավորման տեսակ	Այո	Սպառողական, խմբային, հավաքածու

Սպառողական փաթեթավորման դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանությունը
1.	Համապատասխանության փաստաթղթերի մասին տեղեկատվություն	Ոչ	
2.	Ռեգլամենտի/ստանդարտի համարը	Ոչ	
3.	Համապատասխանություն ստանդարտին	Ոչ	
4.	Ապրանքի անվանումը	Այո	
5.	Ապրանքային նշանի անվանումը	Ոչ	
6.	Ծագման երկիր	Այո	
7.	Ապրանք միավորի քանակը փաթեթի մեջ	Ոչ	
8.	Փաթեթվածքի բնութագրիչները	Այո	
9.	Ապրանքի անվանական քանակը	Այո	
10.	Չափման միավոր	Այո	
11.	Փաթեթավորման տեսակ	Այո	
12.	Փաթեթավորման նյութ	Այո	
13.	Ապրանքի տեսակ	Այո	
14.	Մանկական սննդի ապրանքի նշան	Այո	

15.	ապրանքի բաղադրությունը՝ դրա բաղադրիչների նշումով (որակական)	Այո	
16.	Հումքի ծագում	Այո	Միայն 1517 ԱՏԳ ԱԱ-ի համար
17.	Պիտանելիության ժամկետ	Այո	
18.	Չափման միավոր	Այո	
19.	Լրացուցիչ բնութագրեր	Ոչ	
20.	Մշակման մեթոդ	Ոչ	
21.	Հոտազերծված յուղ	Ոչ	
22.	Հիդրացված յուղ	Ոչ	
23.	Հիդրոգենացված յուղ	Ոչ	
24.	Սննդային հավելումներ/բուրավետիչներ	Ոչ	
25.	Ճարպի զանգվածային մաս /ճարպի պարունակություն	Ոչ	
26.	ԳՁՕ պարունակող	Ոչ	
27.	Օգտագործման/կիրառման վերաբերյալ առաջարկություններ	Ոչ	
28.	Պահպանման պայմանները	Ոչ	
29.	էներգետիկ արժեք (կալորիականություն)	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
30.	Չափման միավոր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
31.	Սպիտակուցներ	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
32.	Չափման միավոր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-

			ների համար
33.	Ճարպեր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
34.	Չափման միավոր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
35.	Աձխաջրեր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
36.	Չափման միավոր	Այո	Միայն 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517 ԱՏԳ ԱԱ-ների համար
37.	Արտադրողի անվանում	Այո	
38.	Արտադրող ընկերության պրեֆիքսը	Ոչ	
39.	ապրանքի պատկերը	Այո	Հնարավոր է ավելացնել լուսանկար բոց ֆորմատով

Խմբային փաթեթավորման դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանությունը
1.	Ապրանքի անվանումը	Ոչ	
2.	Փաթեթավորված սպառողական ապրանքի GTIN	Այո	
3.	Ապրանքի քանակը փաթեթում	Այո	
4.	ապրանքի պատկերը	Ոչ	Հնարավոր է ավելացնել լուսանկար բոց ֆորմատով

Հավաքածուի դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանությունը
1.	Ապրանքի անվանումը	Այո	
2.	Ապրանքային նշանի	Ոչ	

	Անվանումը		
3.	Ծագման երկիրը	Այո	
4.	Հավաքածուի կազմը	Այո	
5.	Ապրանքի դրոշմավորված միավորների քանակը հավաքածուի մեջ	Ոչ	
6.	Արտադրողի անվանումը	Այո	
7.	Արտադրող ընկերության պրեֆիքսը	Ոչ	
8.	ապրանքի պատկերը	Այո	Հնարավոր է ավելացնել լուսանկար բոց ֆորմատով

Ապրանքները շրջանառության մեջ դնելու դեպքում

NN	Դաշտի անվանումը	Պարտադիր դաշտը	Մեկնաբանությունը
1.	Ապրանքախումբ	Այո	
2.	Ապրանքի նույնականացման տեսակը	Այո	
3.	Արտադրության ամսաթիվը	Ոչ	
4.	Պիտանելիության ժամկետը	Ոչ	
5.	Արտադրական սերիայի համարը	Ոչ	
6.	Ապրանքները շրջանառության մեջ դնելու եղանակը	Այո	
7.	Նույնականացման ծածկագրերի քանակը	Այո	

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

07.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ